



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ
ԳՐՈՂՆԵՐ

ԱՀԱՎՆԻ

ԱՐՏԵՐԻ ԼԻՐԻԿԱՆ

ՊԵՏՐԱՆ
ՑԵՐԵՎԱՆ

1930



№ 6


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

№ 6

ԱՐԱՎԻՆ

17706 A 8060

ԱՐՏԵՐԻ ԼԻՐԻԿԱՆ



ՄԵՏՐԱՑ 1980

ՀԱՅՊՈԼԵԳՐԱՔԻ ՏՊԱՐԱՆ
ԹԵՏՐԱՆ № 1457.
ՊԱՏՎԵՐ 586
ԳՐԱՓԵԹԳԼԽՎԱՐ 6003 (բ)
ՏԻՐԱԺ 2500

ԱՐՏԵՄԻ ԱԼԻ ԽՈՎՈՅՆ

Հասան արտերն արծաթ,
Հասան անառէ,
Եռոյի պիս յելան մարմանդ
Ու քաղցրամառէ :

Վոսկի հասկերը հողին
Իջան անոնէ,
Ախաս արտի պիս հզի,
Ծփաց հանդաբա :

Հոսեց քրտինքն առաս,
Հասան արտում,
Ինչոյիս վատերը մարմանդ
Ու միշտ խնդուն :

Ու յերգերո ծծեցին
Հուրը ամսան,
Վոսկի հասկավ հուզիվեցին
Ու ամբացան :

Հետո վորովես լեռնազրուր,
Սոսիների տակ
Կարկաչեցին քաղցրալուր
Ու սասնորակ :

Հոսի՛ր, ի՞մ յերդի առու
Ու քրտինք վարար :
Յեղիր ջինջ ու անհատնում,
Հասկի համար :

Յես կսիրեմ իմ յերկրի
Հասկերը վոսկի ,
Ինչպես թրթիուը յերդի ,
Կամ քրոջ խոսքի :

Յեզ քաղցրորեն կփարովեմ
Մեր արտերին ,
Ինչպես մի քույր՝ սիրասուն
Ու մտերիս :

Վոսկեծամիկ մեր արտեր,
Արծաթածուփ ու սիրուն,
Յես ինչքան եմ յերազել—
Տեսնել ձեղ հասուն :

Զեր վոսկեվոր բերքին՝
Լի և հուսացող,
Յես հառել եմ աչքերն իմ՝
Վճիռ ժալտացող :

Վորպես անդին որորան
Ու անուշ հանդիսատ,
Միշտ իջել ե ինձ վրա,
Զեր ծփանքը ջինջ :

Ու աչքերով մտերիմ,
Ժպիտներով՝ չող,
Ինչքա՞ն յես գուրզուրել եմ
Զեր հասկերն հասնող :

Շողում եք ինչպես դոհար ,
Ինչպես հասուն միրգ ,
Հասկեր վոսկե կոհակ
Պարզել եք յերկրիս :

Արտե՛ր , կրկին մտերիմ
Իմ քույրերն եք դուք
Ու իջնում ե իմ սրախն ,
Զեր յերգը խնդուն :

Հուսապարփակ ծիլերիդ—
Յերգերն իմ առու ,
Կարկաչում են ոլարդ ու ջինջ—
Կանաչ հանդերում :

30 ♂ . Յերևան .

Ծ Ե Ր Ա Կ Ո Ւ Մ

Մանկական որթեր, մանկության կարուտ—
Սնուշ փարզում և հովը իմ դեմքին,
Ահա կածանն ու մասրենին ծանոթ,
Վազում և դվարթ սովակը կրկին:

Ու դռնից նայող նորահարսի ոգես—
Արեն և կախվել ծանոթ բլուրից,
Նրան նայելիս միշտ հիջում եմ յես,
Մի դորչ մանկություն, վոր հուզել և լիճ:

Իմ մո՛ւլֆ մանկություն, վոր կարտան հասկի
Քեղ տոչորում ար այնպես ջինջ ու խոր,
Սովասում եյիր, վոր արտը հասնի,
Բայց հողն եր լալիս՝ անբերբի, տխուր:

Ու այն ամառը, ինչողես հիշանդ քույր,
Կարոտ սառ ջրի, դեմից նայում եր.
Փարզել եր անհույս, դրկել արտ ու թումբ,
Վտիս հասկերը և որորվում եր:

Հողնած ճռուում եր յերկանիով մի սայլ,
Տխուր հորովելն եր դանդաղ մարում.
Պաղ նայում եյին մի դույդ աչք մոայլ,
Խոկ սև ճակատից քրտինք եր ծորում:

2.

Անդոյացել ե այդ մանկությունը իմ ,
Ու բարձրացել եմ այն մասրենու պես .
Ծիծաղն ե նատում իմ մութ աչքերին ,
Յերբ այս բիլ ամառը դիտում եմ յես :

Մանոթ են բոլոր ճամբեքը կանաչ ,
Հասուն արտերն են ծիծաղում իմ գեմ ,
Վորպես շորորան նորահարս դառած ,
Վոր ջրի ճամբին լուռ շտապում են :

Պողպատի նժույզն ե ուրախ հեռում
Ու ծուխ բաց թողնում ու ոռնզներից .
Արծաթ ծովի պես հասկն ե որոքվում
Ու նազով նստում կանաչ թումբերին :

Մանոթ մի տղա հեծվորի նման ,
Արտերը հնձող նժույզն ե սահճել ,
Ու լուրթ աչքերից ժպիտը նրա ,
Արտերի վրա յե մեղմ տարածվել :

Արտերի ուղին դոփող նժույզը
Թոշում ե առաջ , վորպես սուրհանդակ .
Նա ավետում ե այս ամռան ուժը
Ու սայլն ե թախծում հին պատերի տակ :

3.

Գանգրահե՛ր տղա , մտերի՛մ Շիրակ ,
Քո կանաչ դաշտում մետաղը զնդաց ,
Նրա յերգերով , իմ անո՛ւշ սիրած՝
Քո բողբոջները անվախ բարձրացան :

ՄԱՅԻՍՅԱՆ ՎԵՐՀՈՒՇ

Հուշ դարձող մի քաղաք, հադարամյա ծերուկ,
Այսոր հիշում եմ դեռ ազոտ, աղոտ.
Վորպես մորթված յեղ, ճանապարհի փոշում—
Նա հեռամ եր հիվանդ ու արնաթոք:

1.

Հեռու կայարանից ու սուլիչը ճչաց,
Բարձրացավ մի բոռունցք այս քաղաքում.
Փողոցում յերգեցին մարդիկ ըմբռստացած,
Հետո ընկան արնոտ բարիկադում:

Մահու նման քինոտ մառւղերը պայթեց,
Պատառ պատառ յեղամ մի արնագույն դրոշ,
Ու արյունը հոսեց, ալ արյունը ներկեց
Հողը՝ չոր ու պապակ, հողը՝ ամուլ ու դորչ:

Ու լոկերը քրքջաց այն բանդիտը հարբած—
Եր հաղթությամբ սուտ ու վարկյանական,
Իսկ նա, դեռ յերգում եր Մայիսյան Մյղարաց,
Հողաթումբի վրա արնոտ ընկած...

2.

Մանուկ, ի՞մ նոր քաղաք, մենք չենք տեսել նրանց
Արյունահեղ կռիւն այլաբացի համար,
Բայց յելել ենք վոտքի մեծ մաքառման դիմաց
Ու կռվում ենք փայլուն մեր վիճակի համար:



Հոնդում ե յերկաթուղին,
Լուսապարար կայարանում,
Ո՞վ ե այն, ո՞վ— յերկաթեղին,
Վոր կալերի ավն ե բաղխում:

Մե՛ր զյուղաստան, մեր տուն, հող,
Արդյոք ի՞նչ եք զդում ձեր մեջ—
Այդ գութանն ե յերկաթեղին,
Գյուղ և մտնում հպարտ ու սեղ:

Ո՛, գու ժպտոտ անշուք մեր հյուղ,
Անույժ աթարների որբան.
Նա կսանըէ գորչ արա ու թումը
Ու կփոխ հասկի սավան:

Յեկ նա կընկնի—թառը մաշված,
Հիվանդ սայլը ել չի ճոռա,
Մինչ առավոտ ու լուսաբաց,
Նա կզնդա զաշտի վրա:



ԲԱԺԱՆՈՒՄ

Դեռնիմ.

Բաժանվեցինք ճամբիւ վրա ,
Յերկաթաշեն կայտանում ,
Յերբ առաջլուն եր հուրհան
Աւ սուլիչը , խրոխտ յերգում :

Ա՛յս , այդ , սուլիչը շողեթոք ,
Քո յերգի պես անուշ զնդաց ,
Բաժանվեցինք սիրով խնդուն
Աւ ողաղ ոհլուը հեկեկաց :

Առաջլուն եր մեր քաղաքում ,
Աւ արեն եր խփել վրան ,
Մավալվում եր մի մաքատում ,
Քրտնում եյին մեջք ու մկան :

Աչխատանքն եր հորդել մեղ մոտ ,
Կոռւմ եյինք կեսորը բիլ ,
Վոր կեսորին հղորազոր
Կանդնի ուժը ձեռքի , մաքի :

Հիմա փոկերն են աղմկում
Ու մկաններ լարվում են հար,
Գիտեմ հեռու քո հյուսիսում,
Կրկին ձեռքն ե ստեղծաբար :

Կրկին ձեռքն ե ստեղծաբար,
Ու շողում են կապույտ աչքեր . . .
Յերբ դուք կերտեք, յերբ մենք կերտենք,
Կրկին կասեմ «բարե՛, ընկեր» . . .

Այստեղ պատը բարձրանում ե ,
Ընկերներդ քար են կրում,
Յեվ յես կերտում ու հիշում եմ
Պոետ տղա, քեզ իմ մտքում :

Ու քո բաժին քարն ու կիրը
Մենք ենք տանուամ ձեռքով, ուսով
Գիտեմ՝ այլտեղ ել յեղկիրը
Դու յես մղում պաղ ոելսով :

Զահե՛լ ընկեր, պտե՛տ տղա,
Մեքն կապված ենք՝ ուր ել լինեք,
Կա մի դազգյահ ու բյուր մկան,
Յեվ անբաժան մասնիկն ենք մենք :

—

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Յես լուս շրջեցի կանաչ քաղաքում,
Պահած սրտումս՝ խոհ, ծիծաղ ու սեր,
Յերբ յերեկոն եր մեղմորեն իջնում
Ու վառվում եյին կաթնաշող լույսեր :

Յես նայում եյի ճերմակ լույսերին,
Ու այդ պարզ, շողուն լճակների մեջ
Յես կորդում եյի կոթնած խոհերիս,
Այս բիլ քաղաքի առորյան հուղիչ :

Յեվ իմ բենուն հայացքի դիմաց
Բարձրանում եր նա՝ չենքը լուսաշեն,
Մի բբոնզաղեմ մարդ քլունդն առած՝
Շինում եր դռներ, լուսամուտ ու սեմ :

Յեվ քարն եր յերգում, յերդում եր չենքը—
«Պուտ, այս ձեռքի կոխին ե խիղախ,
Տե՛ս, ջնջվում ե հյուղերի հետքը
Ու թմբությունը հին ասիական» :

Շենքն ինձ ասում եր. «յես բետոնածին,
Յես այս քարավուն քաղաքի հիմքն եմ,
Իմ հաղթանակին դու պայծառ հայիր—
Դեռ թումբեր կառնեմ, խութեր կհարթեմ» :

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Առույգ խմբերը վառ մանուկների—
Մայթերն են զոփում ամեն առավոտ,
Ժպտում են նրանց աշուկները բիլ
Ու բուրում վորագես նոր բացվող կոկոն :

Մատաղ քայլերն այդ մանուկների—
Իմ ջահել սրտի վրա յեն դրսվում
Ու հույսն ե վառվում իմ դասակարգի,
Յերբ ճամբի վրա նրանք են յերգում :

Ու նրանց վճիռ, կապույտ բիբերում
Կարդում եմ յես մեր պայծառ ապագան,
Այն, վոր հաղթության բաղդ ե խոստանում
Ու լուրթ ծովի պես փովում ափից-ափ :

Մեր ջինջ արեն և ծիծաղում նրանց
Ու հողն ե սնում կանաչ տունկերը,
Փթթում են նրանք այս հողի վրա,
Ինչպես այն սերմից յելնող հասկերը :

—

Դու նազում ես, յե՛րիկո, դու նազում ես՝ Հանդարտ
Ու առամ ես, յե՛րիկո, անցան թափիծ ու դարդ :
Յեկ որորվում ե սոսին—այն, վոր յես գեռ մանուկ,
Խազում եյի մինչ զիշեր, իր մութ ստվերներում :


Հիմա պոետ եմ յես ու յերգեր եմ զբում,
Սոսին ծերուկ ե դարձել ու զլուխն ե թեքում :
Յերեկո՛, քո ստվերում չչնջում ե սոսին—
«Ծնչո՞ւ այցի չես դալիս, չես յերգում իմ մասին» :

Ալսր ինչպե՞ս հեռանալ, ախր ինչպե՞ս թողնել—
Բետոնաշեն քաղաքի յերգն ինչպե՞ս չառել . . .
Այն, վոր մաքսումով, անդուլ կռվով ե յելել
Ու չի ուզում ընկնող վոչ մի թփի զիջել :

Ու այն բաղուկները, վոր տանում նն անդուլ
Եերկաթաշեն դարը և ճամբար յեն Հարթում,
Այստե՛ղ, ծեր սոսուց անդին և մուժիկի ստեպում
Հողը մետաղով են զինում ու խրամներ առնում :

Յեվ պոետն Խլ նրանց մեջ, նրանց հետ ե սնվում,
Ու իր հոգում հաղար սեր, հուզումներ ե բարդվում.
Իսկ ձեռքերն ասում են—դու մեր մասին յերդիր,
Ահա կոխվը մեր, ահա՛ յելնող յերկիր:

— Յերդի՛ր, խրոխտ ու սփարդ, մեր մաքառման մասին,
Զե՞ վոր դու մարդ ես՝ ջահել, հասել ենք միասին:
Յեվ պիրկ ուսերիս վրա և ուսերիցա անդին
Խոսքը բոռնցք ե դառնում՝ յերկաթի, բետոնի:



* * *


Մեր արտեր, կանաչ արտեր,
Ծովի պես ծփուն հասկեր—
Չեզ սիրտն իմ, յերգն իմ ահա,
Վորովես վառ արնոտ վարդեր:

17706
Վարդենի կարմիր ու թեժ,
Արտերի թումբի իմ ծառ,
Ո՛, ինչպես հուզել ե քեզ
Արտերի յերգը պայծառ:

H 8060
Վարդենի պայծառատես,
Թումբերին կոթնած իմ թուփ.
Դու արտի արնե յերգն ես—
Խցում ես ամեն իրիկուն:

Արտերը յելնում են, յել,
Արտերը հասնում են հար.
Բացվում են, ծփում են տե՛ս
Լցվում են հասկով հաստատ:

Վարդենի, դալկահար թուփ,
Դողում ես հասկի դիմաց.
Անցնում են խրամ ու թումբ
Հասկերը, ալիք տոած:



Մրասում ես, ոտա՞ր իմ թռափ,
Թոշնում են թերթերդ լուս,
Համկն պատվ խրամ ու թռամք,
Վա՞րդենի, քեզ ո՞վ յերգի:

Զեռքի դեմ, կամքի դեմ մեր,
Դու կընկնես յեկող գարուն,
Բա՞ց կանենք սև ակոսներ
Վարդենու խոպան ձորում:

2.

Վարդածո՛ր, իմ արտածոր,
Տարածո՛ւն, անսահման արտ,
Ո՛, ուժն այս պի՛րկ և, հզոր
Դեռ կառնի բերդ ու խրամ:

3.

Յել պոետն համկի համար,
Մաքառող բազկի համար,
Պիտի իր յերգն ասի—
Վարդենի՛, քե՞զ չե՞ն յերգի...

Մ Ա Յ Ր Ա

Յերեկ եր , յերգեց մեր ավտոն լուսե ,
Բոնեցի հեռու գյուղերի ուղին ,
Կարութը նրանց իմ սիրաթը հուզեց ,
Ու ավտոն կտրեց այն գորչ փոշուղին :

Ու անիվները փուշոտ ճամբեքում—
Վոլորագալար վազեցին առաջ ,
Սպասում եր ինձ այնտեղ—գյուղակում
Մի քոսոտ տնակ ու մայրս՝ պառավ :

Յարձրացավ ավտոն բլուրը կանաչ
Ու իջավ ներքե՞ սուրալով արագ ,
Հետո ժպիտով փովեց իմ առաջ—
Մեր փոքրիկ գյուղը հյուղերով տափակ :

Ու մայրս զրկեց ճեռքերով գողդով ,
Սիրով համբուրեց գլուխս գանգուր .
— Սիրելի՝ վորդի , քեզանից առաջ
Յեղաւ յես նրանց—կոլխոզի շարքում . . .

Սիրոս փոթորկվեց հրճվանքով ներքին,
Ու մութ աչքերս փայլեցին խինդով .
Խորին բերկունքով առի—մայրիկ խմ,
Լցվար որերիս անմար յեռամաղով :

Յեզ ավտոն ճշաց ճամբեքի փոշում ,
Մտավ մոտակա գյուղը դարիալեր ,
Յես տանում եյի խմ սրտում անշուք—
Մի ջահելացած պառավի սրատկեր :

20 թ. Հենինական .

«ԲԱՑԼՇԵՎԻԿՑԱՆ ԱՇԽԱՆԱՑԱՆ» ՇԱՐԳԻՑ

1.

Բաղմաբեղուն մեր հող—
Քո թումբերի վրա,
Ահա ծիլեր՝ յելնող
Ու յերկաթի յերամ :

Գյուղեր գորչ ու հողե,
Վոր աշքերում պահած
Հազար վճիռ խոհեր
Ու հույսեր անմար . . .

Ու բանակներ՝ յելնող՝
Չուղունե բազկի պես—
Ենտուզիաստի գրոհ
Դեղ հողն արեատենչ :

2.

Սուզմել ե անդարձ մանկության նասիր
Ու մնացել ե մի փոքրիկ վերհուշ ;
Ահա անցյալի դեղին կտավը
Ու վրան նազող մի հիվանդ աշուն :

Ահա! մի ծեր դեմք, մի զույգ հին տրեխ,
Ու արտավարի անսիրտ հորովել,
Հետո, դառնում են սայլերը դանդաղ—
Աշունը խիստ եր, իսկ հողը՝ անսերմ...

3.

Հողն իմ բացել մը իր գիրին ու ծրցը,
Հողն իմ հասում ե, վորպես հարսնացու,
Իր փիրուն դրկում ամեն մի կոչտը
Տաք ծրարել ե մի լիք սերմնացու:

Յեվ նժույդները յերկաթայերամ,
Մարտի յեն յելել կանաչ դաշտերում,
Չուզունե ձեռքը բաշերի վրա,
Իմ բեղուն հողի շերտերն են շրջում:

Ենտուզիաստը—այն սեաչ տղան,
Սերմն ե պահ տալիս հուսացող հողում
Արդավանդ հողը իր կրծքի վրա—
Լիառատ բերքի հույսեր և վառում:

Ո՛, նա լավ գիտե, այն սերմող տղան,
Վոր ամեն սերմը, մի նոր հարված ե,
Վատուժ թշնամու ուսերի վրա,
Յեվ նա սուր ցամից պիտի կաղկանձե:

Յեվ յերկաթարաշ ձիերի վրա,
Հաղար սերմնացան տղաներ դեռ կան,
Վոր ստեղծում են մեր գյուղի հպմար—
Բայլշեկիյան մի հաղթ աշնանացան:

ՄՐԳԱՀԱՍ

Վոսկուն արեի շիթերն են չողուն
Լցվու այս բազում դեղին՝ ոլորկերում։
Ու թփերի տակ նորից են լցվում
Քաղցրակաթ հյութով ու միշտ ծանրանում։

Այդ վողկույզներն են աչքերի պես վառ
Վոր զուրս են նայում դանգուը թփերից,
Տվել ե նրանց հողը կենաարար—
Իր ամբողջ հյութը քաղցրածոր ու չինչ։

Ու ծանրանում են ճյուղերը կանաչ—
Աղջիների պես նաղանքով ժպտում—
Աշունն ե իջնում, վոսկուն մրդահաս
Ցերպերի պես վառ, լի ու վարարուն։

Իմ վոսկուն աշուն, անուշ մրդահաս,
Ահա յերկաթի, բաղկի տեմօլերը.
Մեր ոլիրկ ուսերին դու նստիր հանդարտ,
Թող անվախ հասնեն յերկրիս մրգերը։

ՅԵՐԿՈՒԻ ՅԵՐԳ. ՓՐՈՁՍ՝ ՆՎԱՐԴԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՆ

1.

Ինչքան կոխվ լինի ու ինչքան մարտ,
Ու ինչքան պատկերներ շողան բոցում,
Կրկին քեզ կհիշեմ, անուշ նվարդ,
Վորպես մի սուր դաշույն աղջամուղջում:

Զե՞ վոր դու ապրեցիր, յերբ վառվում եր
Արնանման մի մարտ մեր աչքերում,
Ու մենք առնում եյինք անթիվ դիրքեր,
Ցևլ քայլում եյիր դու մեր շարքերում:

Դու մի կապուտաչյա աղջիկ եյիր,
Յերբ դըսում վոռնում եր մի գնդացիր,
Սղոցում եր հազը վառողային
Քո կիսամեռ կյանքից անթիվ թելեր:

Նվա՛րդ, ընկար դեղին աքասու պես,
Արնածարավ աղջիկ, իմ մտերիմ,
Նորից առանք մենք նորանոր դիրքեր,
Հետեւում թողնելով մի պաղ շիրիմ:

Հիմա բիլ արեն և խփել վրան,
Աւ մեր որն և բացվել ցուքով մարմանդ,
Բայց իմ յերգերում ու սրախ վրա,
Դեռ ապրում ե անմահ, մի լավ նվարդ:

Ու յերկու ջինջ աչքեր ինձ առում են «Գնա'»,
Դու մի կանզնիր, կովիր նրա համար,
Վորի ջինջ հմայքով նվարդն ընկալ,
Բայց բանակը հաղթեց հերոսաբար . . .»

2

Թվում և թե նորից ինձ կանչում և մի ձեռք
Ու պարզված ե կրկին մի սիրա անհում սիրով,
Վորպես շուրջս հնչող մշտահոլով մի յերդ,
Կրկին դեգերում ե մի աղջկա անուն:

Յեվ լցվում ե սիրտս լուսե կարոտով մի,
Այնտեղ բողբոջում ե արնանման մի վարդ,
Տորբոքվում անցած արնոտ որվա արփին
Ու դարձյալ կովում ե մի սեաչյա նվարդ:

Նիվանդ աղջիկն այն ուներ աչքեր մարվող,
Ու մի արնածոր սիրտ, վորպես կարմիր դրոշ,
Այդ ամենը տվեց, մեր բանակի մարտում
Ու գլորվեց, ընկալ խրամատում նաև դարձ:

Քրոջական ափսոսանքն ե սիրտս կրծում . . .
Սակայն շուրջս այսոր բացվում են բիլ վարդեր.
Կրկին դրոշ, կոփի, հաղթանակի ցնծում
Ու մարտի յեն յելել բյուր նվարդներ:

ՀԱՐՎԱԾԱՑԻՆՆԵՐԻ ՄՈՏ

Խփում են, անքում են; քրտնում են նրանք—
Այն տղաները կապույտ բլուզով,
Հե՛յ մեկ ել խիթեցեք, խփեցեք տրա՛գ
Յելնե՛նք այս կոմից ուրախ յերեսով:

Նորից իջնում են, ու նորից անքում են,
Զարկերը, մեջքերը, ուսերը ջլուս;
Մաքառման ժամերը հողմի պես թոշում են
Ու նրանց սրտերում հուզումներ բարդում:

Ահա նա!—դալիս ե յերբորդ սուբհանդակը
Դիրք առ զիլք խլում ե բետոնի թումբեր,
Ուղինե՛րը մաքրե՛լ, վարար ե ընթացքը,
Նա բերում ե իր հետ զեռ հաղար մարտեր:

Դազդյահների առնե և, ածուխ հասցրեք,
Մեծ սլատին քար ու կիր տվեք, և աղյուս,
Զկանդնել, չդաղրել, չլքել յերբեք,
Դիրքերը պիտ առնել ենտուզիազմով:

Արթուն լինել պետք է, ակետք և մարտում լինել—
Յերկաթի, բետոնի թումբերի վրա.

Մաքառումով պետք է վերջին բերդը առնել—
Կատարված պլանը թող պայծառ հուրհրա:

Ու նորից խփում են ջլապինդ ու հատու.

Սյն տղաները կապույտ բլուզով,
Բետոնի պատերն են որ որի բարձրանում—
Վոր մարտից մենք յելնենք պայծառ յերեսով:

ԱՐՏԵ

Հասել ես իմ արտ,
Լցվել ես հասկով,
Ծփում ես հանգարտ
Ու անուշ նազով:

Գալիս ե քամին,
Տրորում ե քեղ.
Ու ջահել սիրտն իմ—
Դու մեղմ հուզում ես:

Կանգնում եմ քո դեմ,
Ժպտում ես անուշ,
Վառելով իմ մեջ
Հազար սեր ու հուշ:

Յելել եմ յես ել
Քո հասկերի պես
Հույզերով հասուն
Ու փարվում եմ քեղ:

Յերկաթե սիրով,
Կիղել եմ սիրտս,
Լցված հույսերով,
Հյուսում եմ յերգու:

Ու իջնում ե լոյ
Աչքերի վրա—
Գո հասկի խինողը
Աբծաթածիծաղ :

Դու հասկեր կատա ,
Յես՝ զնոպուն յերգեր ;
Իւ մենք կհուզենք
Դու հազար սրամեր :

ՊՈԵՏԱԿԱՆ

Աշնան մի գիշեր նա կմահանա ,
Ու սոսիները ահճայն կորորվեն
Խոհերդ կիջնեն , լուռ կծանրանան ,
Յեվ դու չես ուզի ել նրան հիշել . . .

Դու կրարձրանաս դալար սոսու պես ,
Կսիրես կյանքը . ինչպես մի որ նա ,
Ու կռիլներում դու ել կհուզվես ,
Յեվ վառ քնարով կը յերգես նրան :

Ու կծանրանա քո մարդի վրա ,
Ինչպես պտղատու ծառը մրդերով ,
Կհնչէ կրկին որվա սիմֆոնիան —
Յեվ քո մեջ վաղը կելնե պայքարով . . .

Կերես «վաղը» քո մեջ անտրտունջ ,
Յեվ յերբ նա յելնի ու դառնա այսոր ,
Դու յետ կքաշլես պայքարից անխոնջ ,
Սովորեղ կիջնեն ուրիշ պոետներ :

ԳՅՈՒՂՈՒՄ

Ամեն թիիի հետ կապված
Մի հուշ անեմ, --
Իմ գեղնավարս անցյալի
Մքլած հյուդեր :

Յեվ չըջում եմ անուազար,
Աբաների մեջ,
Թփերն ունեն պատմության
Մի տիսուր եջ :

Այստեղ ծերուկն ե չրչել
Գլխակախ և լուս,
Ռւ ցամաք հովն և իրջել
Յերկու արցունք . . .

Սակայն զեմից լսվում է
Մի կարկաչյուն,
Այն ո՞վ ե , այն աղջիկը,
Դեղին արտում . . .

Ես մետաղով ե հնձում
Հասուն հասկը .
Դեմից վաղում ե , հորդում
Պաղ գետակը :

Ու իր ծառվի աչքերում ,
Արտերի խինդը—
Հասկի խուրձեր և բարդում
Դյան աղջիկը :

Տրակտորի'ստ իմ ընկեր ,
Արևշո'ղ աղջիկ ,
Ո՛ պիրկ են քո ձեռքերը ,
Հաղթ ու ճարալիկ :

Ու արևշող աշքերիդ
Յուլքի դիմաց
Յես դնում եմ յերգերն իմ
Բազկիդ համար :

ԱՇԽԱՆ ՎԵՐՀՈՒՅԾ

Յես այսոր հիշում եմ մի ծեր աշուն .
Մարգող աչքերի պես նա նայում եր ,
Աշնան միզում շրջող մի վորբ մանուկ ,
Առը ամուլ դաշտերում զեղերում եր :

Թեաթափ աշունը խշիչում եր ,
(Ո՞ւ իմ անցած մանկություն գեղնադեմ)
Աշնանայի՞ն լուսին քեզ հիշում եմ
Զարդված ափսեյի պես մոայլ ու թեն :

Այն վորբ մանկան համար ուրիշ յերազ ,
Ուրիշ կարոտ չկար արափց բացի ,
Ուր կուզեր նու շրջել ուրախ , անլաց
Յեզ սովասել , վոր չեկ տրուը հասնի :

Բայց չհասափ արտը , աշունն յեկամ ,
Պապակ հողը միայն ախուր թափծեց ,
Թումրի վրա վոչ մի հասկ չհասամ ,
Միայն գյուղն եր հեռում քամող քաղցից :

(Ո՞ւ վորբացած մանուկ , իմ խեղճ ընկեր ,
Ե՞նչ եյիր վորոնում այն մշուշում ,
Յերբ հեծում եր հողը չոր ու ավեր
Ու հույսի վոչ մի սերմ ել շեր ճայթում) :

Յես հիմա քայլում եմ ծանոթ դաշտով,
Ուր հայրս ջրել ե մի կտոր հող,
Հետո հիվանդ յեզով լուս ու տրասում
Փորփրել ե արտն իր խոպան ու չոր:

Նա հողում թաղել ե նվազ սերմեր,
Սպասել ե յերկար, վոր կանաչնն,
Լացել են աչքերը մոայլ ու թեն
Ու աշունն ե թախծել հորս կանչից:

Բայց յես հիմա դաշտում մի այլ արտվոր,
Տեսնում եմ կենսախինդ հողն ե վարում,
Նա ուրիշ մի հույսի սերմ ե թաղում,
Վոր հուսաշող ծլի հաջորդ դարուն:

Իմ դեմ ծանրանում ե մի այլ աշուն,
Վոսկե զանգուր մանկան զվարթ ճիշով
Հողի առատ բերքն ե անուշ խշում,
Ու մեր յերգն ե վաղում զիլ կարկաչով:

Հաղարների կերտած ջահել յերկիր,
Յէս տեսնում եմ հասնող արտերը քո,
Ինձ հույսում ե պայքարը գեղջուկի—
Ու հաղթող աչքերի փայլը հորդող:

Աշուն վոսկեգանգնւր, անուշ յեղբայր,
Ահա բազուկները մեր մտերիմ,
Ու զիլ յերգերը մեր ստեղծարար,
Բեղուն հողին քո և ճայթող սերմին:

Դու ծանրացիք խինզով մեր ուսերին,
Աւ թող յերկրիս բերքը լինի առաստ.
Վողջույն հողը զինող հազարներին,
Հացի ու յերկաթի գյուղին անպարտ:

ՅԵՐԿՈՒ ՍՈՍԻ

Իմ պատի տակ իշշում են
Դեռ յերկու սոսի .
Ու ինձ հաճախ ասում են—
—Պոե՛տ, ժեզ լոիր :

Այդ սոսիներն հասել են
Ու կուցել,
Ո՛ ինչքան բուք են տեսել
Ու ինչքան անձրեւ :

Մորս վարսերի պես լուռ
Ճերմակել են .
— Սոսի՛ ստար, հեռու քույր,
Զեզ մոռացել եմ :

Առավոտ, լուսաբացին
Զարթնում են նրանք—
Յերկու ծերացած սոսի
Թումբի վրա :

Ու ծափում են, նվադում
Մի պաղ պարերդ
Խշում են, գրկում իրար՝
Մեղմ ու անսեր :

Ու անցնում են սրբնթոց
Նրանց տակով,
Յերկու աղջիկ դիլսարաց
Ու մի մանուկ :

Նրանք դործի յին դնում
Լուռ ու հանգիստ,
Առախները յերդում են
— Մեզ ի՞նչ, մեզ ի՞նչ . . .

Այդ աղջիկները պայծառ
Մեր առավոտն են,
Վոր մաքառումով համառ—
Միշտ բարձրանում ե :

Առախներ ձերմակավարս,
Աղջիկների դեմ
Դուք կթեքվե՞ք մեղմարտ,
Մի լուսաղեմ . . .

Ու դեռ կքայլեն նրանք,
Կարշավեն,
Կլարեն կամք ու մկան՝
Պարզած ձեր դեմ :

ՄԻ ՄԱՆԿԱՆ ՀԱՄԱՐ

Ե՛խ , իմ կայտա՛ռ բարեկամ ,
Դեղաժպիտ ու պայծառ ,
Քեզ ևմ յերդում այս անոցամ
Իմ նո՛ր սոսի , իմ լա՛վ ծառ :

Ճամբի վրա յես բուսել ,
Բարձրացել ես գեղուղեշ .
Պոետի սիրտն ես հուզել
Քաղցրահնչյուն յերգի պես :

Ու հասնում ես իմ դիմաց ,
Ի՛մ կապուտաչ բարեկամ .
Ոմբանում ես որ առաջ --
Դասակարգի թեկի տակ :

Վաղը դիրքերը կառնես ,
Վաղը կլինես մուրճահա՛ք
Իմ նո՛ր սոսի դեղուղեշ ,
Իմ մանկակա՛ն բարեկամ :

Յեզ քո վորքըիկ ձեռքերով
Պիտի վարես մի դաղդյան ;
Յես իմ վճիտ յերգերով ,
Կրկին քեզ այցի կզամ :

ի՞մ հուսառու, դալար ծառ
թո աչքերի ծովի մեջ—
կչողա պարզ ու սպայծառ,
Դաստկաբդի կամքը մեր:

Վաղը կլինես մուրճահար,
Վաղը դաղդյահ կլարես,
Դրոշ իմ, մաքուր, պայծառ,
Բարեկամ իմ լուսերես:

Լենինական 30 թ. 5/V.

ՓՈՔՐԻԿ ԱԼԻԿԻՆ

Բացվում են բողբոջները յերկրիւ,
Գարուն ե իշնում կրկին,
Գարնան պես ժպտուն իմ մանկիկ
Վազում ես թեթև, վորպես վիթ:

Այս յերկրի նախշուն գարնան պես,
Գլգլան ջրերի պես կապուտաչ,
Աճում ես մանուկ իմ ժպտերես,
Մեր դաշտերում բուրող ու կանաչ:

Մանուկ իմ, քո կյանքի գարունը
Բացվում ե պայծառ ու արեուն,
Իմ փոքրիկ, քո համառ աճումը
Լցնում ե սիրտս յերգերով:

Քեզ նման կայտառ յերկիրն իմ,
Քեզ նման հարաճուն մի մանուկ,
Փոքրիկ իմ, ընկեր իմ, անգին—
Ամրացող այս յերկրի դաւրուն:

Ինչ լա՛զ ե մի գարուն լինել,
Քեզ նման մի վտակ՝ կարկաջուն,
Ինչ լա՛զ ե կրկին մանկանալ,
Ու լինել քեզ նման հարաճուն:

Ու ծծել բուրմունքն այս կյանքին,
Այս յերկրի վերելքն ապքել,
Կանաչել կրկին ու կրկին
Ու յերբեք, յերբեք չողառվել.

Սիրեցիր բարդուն
Ու ինձ հետ չեկար,
Հեռու յես արդեն
Ու ոտարական . . .

Յես չտխրեցի,
Յերբ ասիր՝ «Լավ չե՞ս,
Նըանց պես հագի,
Վոր միշտ սիրեմ քեղ» . . .

Դու չդիտելիս,
Վոր յես հասարակ
Մի աղջիկ եյի,
Առանց շուշք ու դարդ . . .

Յես սիրում եյի
Մեր առորյան մեծ,
Իսկ զու՝ մի բարդի —
Այս մեծ անտառից :

Կառչեցիր բարդուն
Ու ինձ հետ չեկար,
Հեռու յես արդեն
Ու ոտարական :

ԲԵՐՔԻ ԼԻՐԻԿԱՆ

Իմ յերկրի միրգն ե աղջկա պես վտու
Ու նույնքան ժալտուն բարձրացել հողից,
Անուշ խշոցը, բուրմունքը նրա,
Վառում ե հազար հույսեր, չող ու ջինջ:

Ու գանգուրները թավիչ բամբակի,
Քուլա առ քուլա սլացել են վեր.
Բացվել են վորպես մանկան բիլ ժալիտ
Ու վերից նայող դարնան ջինջ արե...

Հողե մկաններ, մեջքեր ջլապինդ,
Քրտնում են հանուն հասուն բամբակի.
Ու դեղջկական դեմքեր բյուրանան...
Սփռում են, վառում մի անհուն ժալիտ:

Ու մեր յերկերն ե, գյուղն ե ամբանում
Կոթնած բամբակի ու հացի ուսին.
Արտերի դիմաց մի ծով մաքառում,
Մի հաղթ գրոհ ե հեղեղում կրկին:

30 թ. Սամազար :

«ԳԵՂՋԱՎԱՆԱՆ» ՇԱՐՔԻՑ

Արեն ելավ չողք արեց,
Դոչը պաշեց սարի.
Իմ տղբերը վար արեց,
Արտը ցանեց զարի:

Իբիկունը զով արեց,
Ազրերս եկավ հանդից,
Մեկն ուրախ խարար բերեց
Իմ բայլշեիկ յարից:

Գարունն եկավ կանաչով
Մեր արտերը կակղեց,
Են դարսունը կարկաջուն,
Յարիս իր հետ բնրեց:

Զան են տարին, լավ տարին
Արտն արեցինք դարի,
Զան արև իմ, զան արև
Բանակային յարի:



Արեն ելավ, չողքը գցեց
Հանդի վրա, Սոնա՛ ջան
Հորձանք տվեց ու սվավաց՝
Վոսկե արտը չորորան:

Ցորնի արտը տես ինչպես վաս,
Շողչողում ե անո՛ւշ ջան,
Վոսկեծամիկ աղջկա նման,
Նաղկտում ե, յարո՛ ջան:

Ձրանցքն եկել արտը ջրել,
Արտն հասել ե, Սո՛նա ջան,
Հասկը յելել, հերկը ծածկել,
Շորորում ե, յարո՛ ջան . . .

Դեպի կալը քշին գառը,
Շոգ կեսորը հա՛ կղա,
Բերքով առատ ես ամառը,
Յերգ ե բերել, հուրհրան . . .

Տե՛ս քաղաքից ինչ ե բերել,
Կեպիավոր են տղեն,
Մեր արտերին ինդի ե բերել
Ու տրակտոր, են տղեն:

Թեղ քշտի՝ գնանք արտը,
Կոլեկտիվով հունձ անենք,
Լիքն ե յերգով ես իմ սիրտը,
Են մաշինով հունձ անենք:

Արեն ելավ, արտը ծփաց,
Քամին յերգեց, Առնա ջան,
Մեր մաշինը արտը գնաց
Դե՛ շաապիր, յա՛րո ջան:

29 ♂ · Լենինական

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՑԵՐԳ

Հերոսական յերկրի ,
Հերոսական վերելք
Թո՛ղ , վոր իմ սիրաը նորից
Քո մարտը գովերգե :

Մեր հողաշեն ու խոնավ
Այն խրճիթի դիմաց
Յերեկ բարձացավ մի պատ
Ու մի ռելս ճոճուաց :

Իրիկվանից մինչև լույս
Աշխատեցին նրանք —
Տղաները , —քարազուն
Այն մեծ պատի վրա :

Ու առավոտ , յերբ հանեց
Արեւ մի շեկշող ,
Վերջին բեռը դատարկեց
Մի տղա քար կըռդ :

Ու ներս մտան դռներից
Զահել մայր ու մանուկ ,
Այս քարակերտ մեծ տնից —
Լովեց ուրախ մի աղմուկ :

ԵԼՆԵԼՈՒՑԶՁՅ

Բարձրացել ե դեպի վեր, ծխնելուցու բետոն
Ու կոկորդից քուլանները յերկինք ե թքում,
Իսկ ներսում հրե լավան զալարվում ե տենդով
Ու դարապած մաշիներով բազուկներն են պրեփում:

Հետո թշչում ե լավան, սողում տաշտակներով
Ուրախաչյա մի տղա ֆորմաներ ե ձուլում,
Շեկ պղինձը սահում ե ցեմենտի տուվակով
Ու այրում ե աչք ու հոնք, յերեսներ ե կիզում:

Ծխնելույզը հանում ե ահեղապոչ մի ծիչ
Ու կոկորդից չպրառում քուլանները մըի
Վախից անտառի խորքում լուսմ ե ամեն ինչ
Խելակորույս երեներն են փախչում անտառից:

Իսկ սևաչյա են տղան ֆորմաներ ե ձուլում
Ու լեռնացող չոգու մեջ ձուլվում են կամք ու ձեռք...
Ծխնելույզը ծխում անտառամերձ ձորում
Ու փախչում ե սկյուռը կաղնու ծառն ի վեր:

ԱԱԱՀՎԵՐԴԻ 29 թ.

ՀԱՍՏԱՐԱԿ ՏՊԱՆ

Ենտուզիաստ և նա , մի հասարակ տղա ,
Բազում դազգյահներից մեկի առաջ .
Յերբ առլիս և ծեզին դործի ազդանշան ,
Նա դեպո յե դալիս ամենքից առաջ :

Քրտնում են , հետո կարմրում են ուժից
Այն հասարակ տղի բազուկները մրուտ .
Ու կեսորվան դիմաց սողում և գեղոյից —
Անխմները յուղած մի պարափող :

— Այս ե'լ ճամբու դրինք , — հրճվում և տղան
Ու ծիծաղն և նստում լուրթ աչքերին ,
Իսկ յերկաթն ասում ե . «Դե՛հ , հարվածի՛ր իվան ,
Վոր յես հպարտ սողամ զեպոներից» . . .

Հասարակ ու համեստ ենտուզիաստ և նա ,
Բայց նա հազար ե , բյուր , ու բոլորն ել իր պես ,
Նրանք արթնանում են յերբ ազդանշան տա ,
Ու ոելսը ուղի նոր պարափող :

ՄԱՆԱԾԱԳՈՐԾՆԵՐԻՆ

Մթնչաղի դիմաց, խրամների վրա
Ու հողային հյուղի պատերն ի վեր,
Բացգում, ծավարիում և մի հուրհան կտավ,
Տարածելով չեկ ու բեկուն լույսեր :

Ու աչքերի վրա, բյուր բիբերի վրա,
Այդ կտավի փայլն և չոքում հանդիսաւ,
Տարածվում և փայլը, խփում ձերմակ վրան
Ու նետովում և բյուր բիբերից անդին :

Բաղմաթիվ կոներով այն շիկահեր մարդիկ—
Ճամբաներն են հարթում մեր կտավի,
Բյուր ձեռքերը նրանց ու մատները պիրեկ
Հյուսում են շապիկներ՝ չոյ ու ծավի:

Տարձրանում և արեն ու խփում և վրան,
Չուրիում և կտավի ձերմակ փայլին—
Ո՛, արեշո'զ շապիկ բամբակաշեն վրան,
Դու անդորրն ես նրանց հողե մաշկի:

Հաղթում և բամբակը—զանդուր արտերի,
Գույնզգույն կտորն և մեր դիմաց,
Պատերն ի վեր ահա ծածկոցը հյուղերի
Ու լվացումը ոճոռքի ծխակալած :

ՆԱՄԱԿ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Յերիտքանվոր Գուրգենի հիշատակին

Պոետ լինելուց բացի ,
Քաղաքացի յևմ յես ,
Գրում եմ ձեզ մի բացիկ ,
Բանվո՞ր ընկերներ :

Յես ունեցի մի ընկեր ,
Գուրգեն անունով ,
Նա շիկահեր տղա յեր ,
Դեռ քսան տարու ..

Աշխատում եր քաղաքի
Մեծ կայարանում —
Հրամանատար դադայահի ,
Ենտուղիստ խոհուն :

Նա մետաղ եր ձուլում ,
Կարկասում պարավող
Յեվ մի տիսուր իրիկուն
Զվերադարձավ տուն :

Ընկալ դադայահի առաջ
Պարավողի համար ,
Բայց անիմը ճռուաց
Ու վոկը կանդ չառալ :



Նըստնք հազար ևն անթիվ
Ու զոհերի դիմաց—
Կողրկվեն ավելի
Բազում ձեռք ու մկան :

Յեկ յեթե ուրիշ Գուրզեն,
Կամ Միսակ պակասի,
Գոհաը դեպո կզա,
Վորովես քազաքացի :

ԼԵՆԻՆԱԿԱՆ 29 թ.

ԹՈՒՐԻ ՍԻԹԸ

Տեսել ես դու քարեր՝
Պղնձի պես դեղին,
Դու ավագ ես տեսել,
Բարակ ծառեր։

Քայլել ես դու դանդաղ՝
Վերստեր, վերստեր,
Յեր մաշված լուսինը
բարձրացել եւ։

Վոռնացել ե քամին,
Արտասվել սառույցը,
Բայց քնել են Ալաղաղի
Լեռները . . .

Դու քայլել ես դանդաղ,
Ու դանդիդ զնդոցը
Զի վանել լեռների
Խուլ թմբիրը։

Տեսնում ես՝ քանդել են հողը դեղին
Ու ջրերն են հուզվում Բալախաշի,
Այն ո՞վ ե, ո՞վ ե այն յերկաթեղեն
Թառանչում ե այս յերկրում ավաղի։

Այդ յերկաթին և գալիս—մահու ուրագ,
Դեղնատերե ծառին, քարին կարկան
Ու անուժ մեռնում և արեից բարե,
Դաշտի թմրությունը անհյուրընկալ:

Անապատում ձղված մի պաղ ջրանցք
Նազով զրգլում և Բարտիստչից,
Նա սիրով զղվում և ափաղին տաք,
Վոր մեր զցած ձերմակ սերմը տճի:

Ու սոզում են յերկար, վերստե՛ր, վերստեր,
Յերկաթե զծերը ցուրտ ու ցնցող.
Այն նժոյզին և գալիս—կարա-Այդը,
Ու ժպտում նրան կայսակեցին:

Նա յեկել և, յերկաթ կարա-Այդը
Ու զանձեր են բացվում, հորե՛ր, հանքեր,
Մեր բազուկն և նա, մեր սոզառած հյուրը—
Անապատում վառած լուսե ջահեր:

ՀՐԱԺԵՇՏ ՈՒՂՏԻՆ

Անտաղատի իմ նով, իմ սիրելի
Դու կմնաս կտագված վախտ ծառին,
Յերբ հիվանդ մահիկը յերնի ելի,
Ու յեղենու ճյուղին անխոս թառի:

Յեվ կողարզես հեռուն՝ աչքերդ լուրթ,
Կերազես մտքով վիրատեր, վերատեր,
Ու կմնաս պարագ, իմ ծերուկ ուզա,
Յերբ ամուերից տեղան ջինջ փաթիլներ:

Կփակվեն կոպերդ լուռ կընկնես,
Բայց կվաղի նորից Կարա-Այղբրու.
Մետաղը հրաժեշտ կկարդա քեզ,
Յեվ շուրջդ կծափե Թուրք—Սիրիբը:



ՑԱՆԿ

ԵԶ.

1. Արտերի լիրիկան	1
2. * * *	5
3. Շիրակում	7
4. Մայիսի վերհուց	9
5. * * *	10
6. Բաժանում	11
7. Յերեանում	13
8. Մանուկներին	14
9. * * *	15
10. * * *	17
11. Մայրս	19
12. «Բայլչիկյան աշխանցան» չարքից	21
13. Մրգահառ	23
14. Յերկու յերդ բրոջու՝ նվազդի հիշտուկին	24
15. Հարվածայինների մոռ	26
16. Արտը	28
17. Պուստկան	30
18. Գյուղում	31
19. Աշնան վերհուց	33
20. Յերկու սոսի	36
21. Մի մանկան համար	38
22. Փոքրիկ Ալիկին	40
23. * * *	41
24. Բերքի լիրիկան	42
25. «Գեղջկական» չարքից	43
26. * * *	44
27. Կուռուցման յերդ	46
28. Մինելույդը	47
29. Հասարակ աղան	48
30. Մանածալը ըճներին	49
31. Կամակ բանվորներին	50
32. Թուրք Սիրը	52



X

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044703

(154)

729

A 1
8060

ԳԻԱԸ 40 ԿՈՊ.



ԱԳԱՎՆԻ
ЛИРИКА НИВ

Госиздат ССР Армении
Эревань—1930